ՎԱՐՈՒՅԹԻ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Տիգրան ՂԱՋԱՐՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

Յուրաքանչյուր պետության քաղաքակրթության աստիճանը որոշվում է տվյալ պետության հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանով, այսինքն, որքան պաշտպանված և հարգված են մարդու իրավունքները, այնքան ավելի քաղաքակիրթ է տվյալ պետությունը, այնքան ավելի իրավական է, սոցիալական և ժողովրդավարական: Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված առաջնային և կարևորագույն երաշխիքներից մեկը արդարադատությունն է: Գաղտնիք չէ, որ արդարադատությունն իրականացնող մարմինների հեղինակությունից, ինքնուրույնությունից և անկախությունից է կախված ցանկացած երկրի օրինականության և ժողովրդավարության մակարդակը, որն էլ իր հերթին ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանվածությունը: Ներկայիս իրականացվող արդարադատության համակարգի բարեփոխումները անշուշտ կնպաստեն արդարադատության իրականացմանը:

Արդարադատության իրականացման ապահովումը՝ որպես իրավական պետության բաղկացուցիչ տարր ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Նմանատիպ դրույթ է ամրագրված նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն ներառում է նաև գործերի քննության ժամանակ ողջամիտ ժամկետները և կարևորում դատարանների կողմից դրանց պահպանումը: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող ինչպես սահմանադրական, այնպես էլ կոնվենցիոնալ դրույթը նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունը ու վստահելիությունը: «Ողջամիտ ժամկետ» օրենսդրական դրույթն իր արտացոլումն է գտել նաև բարեփոխվող օրեսդրության մեջ: Այսպես, քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը քրեական դատավարության սկզբունքների շարքում ընդգրկել է վարույթը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքը: Հետևաբար հարց է ծագում, ի՞նչ պետք է հասկանալ «վարույթը ողջամիտ ժամկետում» իրականացնել ա-

սելով, ո՞ր պահից այն պետք է հաշվարկել, ե՞րբ է այն ավարտվում, որո՞նք են ողջամտության սահմանները, կա՞ն արդյոք կոնկրետ չափանիշներ այն կանխորոշելու համար:

Այս հարցերի պատասխաններից է կախված, թե արդյոք կդառնա՞ ողջամիտ ժամկետը որպես կամայականության դրսևորման գործիք, թե՞ կծառայի յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման երաշխավորմանը:

Աշխատանքում փորձ է կատարվել ընդգծել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով ամրագրված սույն սկզբունքի դերն ու նշանակությունը արդարադատության իրականացման գործում, ամրագրել այն ուղենիշները, որոնցով պետք է առաջնորդվել ողջամիտ ժամկետի հաշվարկման համար:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում 19-րդ հոդվածն առաջին անգամ ՀՀ օրենսդրություն ներմուծեց գործերի քննության ողջամիտ ժամկետի հասկացությունը: Նշված հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքն իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար ունենալ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում մասնավորապես սահմանված է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Ինչպես երևում է, թե՛ Կոնվենցիան, թե՛ ՀՀ Սահմանադրությունը օգտագործում են «ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք» ձևակերպումը: Ուստի կարծում ենք, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ևս պետք է սույն սկզբունքը ամրագրեր «ողջամիտ ժամկետում գործի քննություն», այլ ոչ թե «վարույթը ողջամիտ ժամկետում» ձևակերպմամբ: Մեր կարծիքով, այս երկու հասկացությունների մեջ որևէ էական տարբերություն չկա, ուստի իրավաբանական տերմինների միատեսակությունը ապահովելու նպատակով վերոնշյալ տարբերակը արդարացված է և բխում է օրենքի տրամաբանությունից:

Եվրոպական դատարանը փորձ է կատարել ամրագրելու, թե երբ է սկսվում հոսել գործի քննության ողջամիտ ժամկետը. «Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդհանրացրել է այդ խնդրի հետ կապված իր հետևյալ մոտեցումները. քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունն սկսելու պահից:[1]

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը գործի քննության հստակ ժամկետ չի սահմանում: Օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստանալով քրեական գործը՝ դատարանը 2-օրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին: Օրենսգրքի 316-րդ հոդվածի 5-րդ մա-

[1] «Շումախերն ընդդեմ Լյուքսեմբուրգի» ՄԻԵԴ որոշում:

սի համաձայն՝ նախնական դատալսումներով առաջին դատական նիստը նշանակվում է սույն հոդվածի երկրորդ մասում նախատեսված որոշման կայացումից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Գործող օրենսգիրքը նախաքննության ժամկետների կատարման որևէ սահմանափակում չի դնում, բացառությամբ եթե որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Այս հարցի հետ կապված առավել արդյունավետ կարգավորում է նախատեսում նախագիծը. Հոդված 194-ի համաձայն՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելին, քան՝

1. Երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով,
2. Չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով,
3. Ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով,
4. Տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով:

Գտնում ենք, որ կախված հանցանքի ծանրության աստիճանից՝ տարանջատում դնելը քննության ժամկետների միջև առավել նպատակահարմար է և արդյունավետ՝ արդարադատության շահերից ելնելով: Քանի որ ներկայիս կարգավորման պայմաններում պրակտիկայում շատ հաճախ անհիմն կերպով ձգձգվում է մինչդատական վարույթը, ուստի նախագծի կարգավորումը ազդանշան կլինի վարույթն իրականացնող մարմնի համար առավելագույնս արդյունավետ գործելու: Այս ժամկետների ամրագրումը կնպաստի նաև դատաքննության զարգացմանը, քանի որ եթե գործող օրենսգրքով գործը մինչդատական վարույթից անցնում էր դատաքննություն միայն այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը երկարատև քննությունից հետո պարզել էր գործի բոլոր հանգամանքները և ձեռք էր բերել ծանրակշիռ ապացույցներ, ապա ըստ նախագծի իրավիճակը այսպիսին չի լինի: Եվրոպական դատարանն իրավասու է անհիմն համարել գործի ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ձգձգումը հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով, այն դեպքում, երբ նախաքննության մարմինները ձգտում են մեղադրյալին մեղսագրել հանցավոր գործունեության հնարավորինս շատ դրվագներ (օրինակ՝ գողության դեպքում): Ընդգծենք նաև, որ մինչդատական վարույթում պաշտպանության կողմի իրավունքները անհամեմատ ավելի պակաս են, քան դատաքննության ընթացքում. մասնավորապես նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը՝ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201 հոդվածի՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Այսօր պաշտպանության կողմը գործի նյութերին ամբողջ ծավալով ծանոթանում է նախնական քննության ավարտին, երբ արդեն էականորեն դժվարացել է պաշտպանության իրականացումը: Իսկ նախագծի կարգավորումը հնարավորություն է ընձեռում ժամանակին կազմակերպելու պաշտպանությունը՝ մասնավորապես հիմնականում այն իրականացնել դատաքննության փուլում, որտեղ գործում է կողմերի իրավահավասարության սկզբունքը: Այն կնպաստի նաև քննիչների, դատախազների և դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցմանը, ինչը նրանց հնարավորություն կտա ավելի մանրակրկիտ և բազմակողմանի քննել ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը: Նման պրակտիկան լայն կիրառում է ստացել Եվրոպայում և ԱՄՆ-ում:

Քրեական գործի քննության ընթացքում ողջամիտ ժամկետի խախտման անթույլատրելիության վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ Սահմանադրա-

կան դատարանը 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշման մեջ, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղղարկելու ինստիտուտը ճանաչվեց ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այդ որոշման մեջ մասնավորապես նշված է. «Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղղարկելու ինստիտուտի կիրառումը պարունակում է նաև արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ»[2]:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, որը ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է և գերակայություն ունի վերջինիս նկատմամբ, արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերից մեկը գործը ողջամիտ ժամկետում քննելն է: Գործերի քննության անհիմն և չպատճառաբանված ձգձգումները մարդու իրավունքների կոպիտ խախտումներ են:

Գտնում ենք, որ քրեական դատավարության օրենսդրությունը պետք է ողջամիտ ժամկետը որոշակիացնի, այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում կոնկրետ ժամկետներ սահմանի, քանի որ այս ոլորտը անմիջականորեն առնչվում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին: Ողջամիտ ժամկետի ցանկացած խախտում, ցանկացած սխալ մեկնաբանություն կարող են էականորեն սահմանափակել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

Քրեական գործերով վարույթի տևողության ողջամիտ ժամկետի հետ կապված Եվրոպական դատարանը ձևավորել է որոշակի սկզբունքներ, որոնք հիմք են հանդիսանում այդ ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու համար:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը յուրաքանչյուր դեպքում ներպետական վարույթի տևողության ողջամտությունը գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Եվրոպական դատարանի դատական պրակտիկան ցույց է տալիս, որ կոնկրետ ժամկետներ չեն ներառվում «ողջամիտ ժամկետ» հասկացության ներքո, բայց մի բան հստակ է. այդ ժամկետը պետք է լինի հիմնավորված ու հենց ողջամիտ: Գործերի քննության ժամկետի ողջամտությունը Եվրոպական դատարանը գնահատում է ելնելով որոշակի չափանիշներից: Այսպես, յուրաքանչյուր կոնկրետ գործում Եվրոպական դատարանը, հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները, ողջամիտ ժամկետը որոշելիս գնահատում է գործի բարդությունը, դիմողի վարքագիծը և տվյալ գործը քննության առած իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց վարքագծի ազդեցությունը գործի քննության տևողության վրա, ինչպես նաև հաշվի է առնում դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվել է տվյալ գործի քննությունը: Հարկ է նշել, որ ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել պետության մեղքով:

Եվրոպական դատարանը Վայիցն ընդդեմ Թուրքիայի գործով կայացված որոշման մեջ գտել է, որ դիմողը չի կարող հիմնվել այն ժամանակահատվածի վրա, որի ընթացքում հետախուզման մեջ է գտնվել և խուսափել է իր երկրի արդարադատության առջև

[2] ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշում:

կանգնելուց:[3] Դատարանի կարծիքով՝ մեղադրվող անձի փախուստը ինքնին ունի որոշակի ազդեցություն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարույթի տևողության հետ կապված երաշխիքների կիրառման վրա: Երբ մեղադրվող անձը փախուստի է դիմում մի պետությունից, որտեղ պահպանվել է օրենքի գերակայության սկզբունքը, ապա կարելի է եզրակացնել, որ նա իրավասու չէ վիճարկելու այդ փախուստին հետևող վարույթի ոչ ողջամիտ լինելը, եթե չներկայացվեն այս ենթադրությունը հերքող բավարար ապացույցներ:

Այսպիսով, ողջամիտ ժամկետի առնչությամբ Դատարանը առաջնորդվում է հետևյալ չափանիշներով՝

- գործի բարդությունը,
- դիմողի վարքագիծը,
- համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը,
- ռիսկի աստիճանը դիմողի համար:

Գործի բարդությունը որոշելիս Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ. բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն: Եթե գործի քննությունը ձգձգվել է դիմողի մեղքով, ապա, դա անշուշտ, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է: Այն դեպքում, երբ դիմողը ձգտում է արագացնել դատավարության ընթացքը, ապա դա կդիտարկվի հօգուտ վերջինիս, սակայն դատավարության ընթացքն արագացնելու նրա ցանկության բացակայությունը չի կարող որոշիչ նշանակություն ունենալ: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ դիմողը պետք է միայն ցուցաբերի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պատրաստակամություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունը արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները[4]: Ողջամիտ ժամկետի խախտման հարցը լուծելիս պետք է հաշվի առնել նաև պետական մարմինների գործողությունները. առաջնահերթ նշանակություն ունի արդարադատության պատշաճ իրականացման ապահովումը՝ գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և ժամանակին ուսումնասիրությունը: Դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը ևս կարող է հանգեցնել վերոնշյալ սկզբունքի խախտման, քանի որ պետությունը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել այս իրավիճակը շտկելու համար: Համապատասխան միջոցներ կարող են լինել, օրինակ, նոր դատավորների նշանակումը:[5] Ողջամիտ ժամկետում գործի քննությունը չպետք է հակադրվի արդարադատության իրականացմանը, այսինքն՝ նպատակ ունենալով առավել սեղմ ժամկետներում իրականացնել արդար դատաքննություն, չպետք է ոտնահարվեն ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալի շահերը: Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի

[3] Վայիցն ընդդեմ Թուրքիայի ՄԻԵԴ որոշում:
[4] Յունին Ալիմենտարիա Սանդերս ՍԱ-ն ընդդեմ Իսպանիայի, 07.07.1989թ, կետ 35:
[5] Ձիմմերմանը և Շտայներն ընդդեմ Շվեյցարիայի, 13.07.1983թ. կետ 29:

կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում և այլն):

Դատաքննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս հաշվի է առնվում կողմի ռիսկի աստիճանի գործոնը, և ակնկալվում է, որ քրեական գործերը, որպես կանոն, պետք է առավել արագացված քննվեն, քան քաղաքացիական գործերը, հատկապես եթե մեղադրյալը գտնվում է նախնական կալանքի պայմաններում:

Եվրոպական դատարանի վերոնշյալ նախադեպերը հաստատում են, որ քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառները: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձությունը, դատական կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մեղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն կարող:

Վարույթը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքը նպաստում է արդար դատաքննության իրականացման գործին: Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը: Ողջամիտ ժամկետում վերջնական դատավարական ակտի կայացումը կարևոր է ինչպես շահագրգիռ անձի համար, այնպես էլ իրավական որոշակիության տեսանկյունից: Ողջամիտ ժամկետ կատեգորիան այնքան էլ վերացական հասկացություն չէ և վարույթն իրականացնող մարմինների արհեստավարժության դեպքում կարևոր լծակ կլինի, յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից ելնելով, արդարադատությանը հասնելու գործում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, ամրագրելով ըստ հանցագործության ծանրության աստիճանի տարբերակված նախնական քննության ժամկետներ, կարևոր երաշխիքներ է սահմանել անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաև անմեղության կանխավարկածի ապահովման համար:

REASONABLE TIME FRAME RULE OF THE PROCEEDINGS ACCORDING TO THE NEW DRAFT CODE OF THE CRIMINAL PROCEDURE

Tigran GHAZARYAN
YSU Law Faculty, 4th year student, bachelor

The degree of civilization of each country is decided by the degree of the protection of human rights in the society. This means the more Human Rights are protected and respected, the more civilized, legal, social and democratic the country is. Justice is one of the primary and most important guarantees to the protection of Human Rights. It's not a secret, that the level of legitimacy and democracy of each country depends on the authority and independence of justice authorities. This, on its turn, ensures the protection of human rights and freedoms. The justice reforms, which are currently being implemented, will promote justice realization for sure.

Ensuring the implementation of justice, as an integral element of the country, is fixed in the 1st part of the 19th article of the Constitution of the Republic of Armenia. Due to this, "Everyone has their own rights to regain the violated rights, as well as to find out the basis of the charge against them in equal terms, maintaining all the requirements of justice, their right to a public hearing by an independent and impartial court within a reasonable time". There is a thesis like this in the 1st part of the 6th article of the European Convention about the Protection of Human Rights and Fundamental Freedoms. The right to a fair trial guaranteed by the 1st part of the 6th article in the European Convention of the Human Rights also includes the hearing of the cases within a reasonable time frame and highlites their maintainance by the courts. Both constitutional and conventional thesis of the right of investigation in a reasonable time frame has the aim to protect the concerned person from a prolonged suspence and to ensure the implementation of justice without delays, which can endanger the efficiency and credibility of investigation. The legislative thesis "Reasonable time-frame" is also reflected in the reforms of the legislation. So the draft code of the criminal procedure among the principles of the criminal proceedings has included the principle of maintaining the proceedings in a reasonable time-frame. Therefore, a question arises, what can be understood when saying "proceedings in a reasonable time-frame", when it should be calculated from, when it is finished, which are the reasonable limits, whether there is a specific criteria to predetermine it or not.

It depends on the answers of these questions, whether the reasonable time-frame will become as a tool of self-willingness demonstration or will serve for each person guaranteeing the right to a fair trial.